

**ԳԼՈՋՈՐԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԻՉՆԵՐԸ ԵՎ ՁԵՌԱԳՐԵՐԸ**

ԱՐՓԵՆԻԿ ՂԱՋԱՐՈՍՅԱՆ

Գլաձորի համալսարանում ուսուցման հիմնական դասագրքերն ու ձեռնարկները ձեռագրերն էին, որոնց ընդօրինակությունը մասնագիտական գիտելիքներ, առանձին խնամք և զգուշավորություն էր պահանջում, ուստի վարդապետարանի բաբունապետ Ներսես Մշեցին անհրաժեշտ ձեռագրերի ընդօրինակումը հանձնարարում էր իր աշակերտներից հմուտ գրիչներին, իսկ դրանք ստուգում և սրբագրում էր նրա աշակերտ ու օգնական Սասյի Նշեցին: Հետևաբար, Գլաձորի գրիչները հենց նրա սաներն էին:

Հայտնի է, որ Գլաձորի համալսարանն իր գոյատևման շուրջ 60 տարիների ընթացքում վարդապետական աստիճան է շնորհել 360 աշակերտի: Եթե նրանցից յուրաքանչյուրի միայն առաջին ընդօրինակությունը հաշվենք, ապա կըստացվի՝ 360 ձեռագիր: Բայց աշակերտներ կային, որոնք մասնագիտանում էին միայն գրչություն մեջ և այդ արվեստով զբաղվում ոչ միայն ուսումնառության տարիներին, այլև ավարտելուց հետո՝ ուրիշ վանքերում ու դպրոցներում, Ուրեմն, Գլաձորի սաները ընդօրինակել են հազարավոր ձեռագրեր, ինչպես մայր վարժարանում, այնպես էլ նրանից դուրս: Սակայն Գլաձորից մեզ քիչ ձեռագրեր են հասել, որովհետև դրանք լինելով դասագրքեր, ստույգ և լավ օրինակներ, շատ են արտագրվել և շուտ շարքից դուրս եկել, մանավանդ, որ այդ ժամանակ ձեռագրերը գրվում էին թղթի վրա: Բացի այդ, մեզ հասած ձեռագրերը աշխարհասփյուռ են և բոլորը չէ, որ նկարագրվել են և բոլորի մասին չէ, որ տեղեկություն ունենք: Եթե դրան ավելացնենք նաև այն, որ նկարագրվածներին շատերը հիշատակարաններ չունեն և դրանց տեղն ու ժամանակը հայտնի չէ, հասկանալի կդառնա Գլաձորից մեզ հասած ձեռագրերի սակավությունը: Այսուհանդերձ, օգտվելով Մաշտոցի անվան մատենադարանի ձեռագրերից, ձեռագրացուցակներից<sup>1</sup>, հայերեն ձեռագրերի դրսի հավաքածուների ձեռագրացուցակներից<sup>2</sup>, հայերեն ձեռագրերի հիշատակարանների ԺԴ դարերի ժողովածուից<sup>3</sup>, հայերեն ձեռագրերի համահավաք քարտարանից<sup>4</sup>, և Գլաձորի համալսարանի մասին գրված ուսումնասիրություններից<sup>5</sup>, հնարա-

1 «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», կազմեցին Օ. Եգանյան, Փ. Անթարյան, Ա. Զեյթունյան, հ. Ա. Երևան, 1965, հ. Բ, Երևան, 1970:

2 Ն. Պողոթյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Սրբոց Հակոբյանց (այսուհետև՝ «Ցուցակ Երուսաղեմի»), հ. Դ, Երուսաղեմ, 1969, հ. Ե, 1971, հ. Զ, 1972, Հ. Տաշյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարյանց ի Վիեննա (այսուհետև՝ «Ցուցակ Վիեննայի»), Վիեննա, 1895, Ս. Տեր-Ավետիսյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի (այսուհետև՝ «Ցուցակ Նոր Զուղայի»), հ. Ա, Վիեննա, 1970, Բ. Կյուրկեսյան, Ցուցակ ձեռագրաց Անկյուրիս Կարմիր վանուց և շրջակայից (այսուհետև՝ «Ցուցակ Անկյուրիս»), Անթիլիաս, 1957, Ս. Մուրադյան, Ն. Մարտիրոսյան, Ցուցակ ձեռագրաց Մշո ս. Առաքելոց-Քարավանյաց վանքի և շրջակայից (այսուհետև՝ «Ցուցակ Մշո Առաքելոց վանքի»), Երուսաղեմ, 1967, Ե. Լալայան, Ցուցակ Վասպուրականի հայերեն ձեռագրաց (այսուհետև՝ «Ցուցակ Վասպուրականի»), Թիֆլիս, 1915:

3 «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», կազմեց Լ. Ս. Խաչիկյան (այսուհետև՝ «ԺԴ դարի հիշատակարաններ»), Երևան, 1950:

4 «Հայերեն ձեռագրերի համահավաք քարտարան», Մաշտոցի անվան մատենադարան, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան:

5 Ղ. Ալիշան, Սիսական, Վենետիկ, 1893, Գ. Հովսեփյան, Խաղբակյանը կամ Պոռոջյանը հայոց պատմության մեջ (այսուհետև՝ «Խաղբակյանը կամ Պոռոջյանը»), Անթիլիաս, 1969,

վորության սահմաններում ներկայացնենք Գլաձորում ընդօրինակված և մեզ հասած ձեռագրերն ըստ գրիչների՝ ճշգրտելով առանձին ձեռագրերի տեղը և ժամանակը, որոնք ձեռագրում բացակայում են, բայց հիշատակարանային ու գրչության որոշ տվյալներով դա հնարավոր է անել:

Վարդան Արևելցու մահից հետո (1271 թ.) հայոց վարդապետարանը, ներսես Մշեցու ղեկավարությամբ, տեղափոխվում է Տարոնի Առաքելոց վանք, ուր իր գոյութունը պահպանում է մինչև 1281 թ. աշունը: Վարդապետարանի գործունեության այդ տարիներից մեզ են հասել միայն շորս ձեռագիր, որոնք գրվել են Մշեցու հանձնարարությամբ: Բացի մեկից, մյուս երեքը կապվում են տպագրաբարունակապես Ծալի նշեցու հետ, որն այդ ժամանակ աշակերտ էր: Մշո Առաքելոց վանքից հայտնի առաջին ձեռագիրը Փիլոն Երուսիմցու Մատենագրության վանքից՝ ընդօրինակված 1275 թ. ներսեսի աշակերտ Գրիգոր վարդապետի և Բարսեղ գրչի՝ ձեռքով<sup>6</sup>, Երկրորդ ձեռագիրը Բարսեղ Կեսարացու Մատենագրության վանքից է՝ գրված 1279 թ., երկու գրիչների<sup>7</sup> Ստեփանոսի և Ծալունի ձեռքով, ներսեսի պատվերով՝ «ի հռչակատր յականատր սուրբ ուխտս Եղիաշարու... ի խրատ ուղղութեան... ամենեցուն»<sup>8</sup>: Երրորդը, որը պարունակում է Եզնիկ Կողբացու «Եղծ Աղանդոցը», գրիչ Լուսերն ընդօրինակել է 1280 թ., ուր Ծալին հիշվում է որպես սրբագրող և վերջին հատվածի գրիչ, նաև «հետևող և աշակերտ սուրբ անն Աստուծոյ ներսէսի վարդապետի»<sup>9</sup>: ներսես բարունակապետի պատվիրած սույն մատյանների գրիչները՝ Գրիգորը, Բարսեղը, Ստեփանոսը, Ծալին և Լուսերը, ձեռագրի գրչության թվականը նշելով, վայրը չեն հիշատակում՝ բավարարվելով ներսեսի անվան հիշատակությամբ, որը ենթադրում է այն տեղը, ուր հաստատվել էր դարձնապետը: Վերջին ձեռագրի տեղանվան հիշատակության բացակայությունը Գ. Հովսեփյանին գցել է թյուրիմացության մեջ, որ իբր այն գրվել է Գլաձորում: Այս տեսակետը հետագայում որդեգրվել է բանասիրության կողմից, իսկ 1280 թ. համարվել Գլաձորի համալսարանի հիմնադրման թվական<sup>10</sup>: Սակայն Առաքելոց վանքից Մշեցու սոված մյուս պատվերը կատարվել է 1281 թ., Մշակավանքում և ավարտվել 1281 թ. սեպտեմբերին<sup>11</sup>: Ուրեմն, ներսես բարուն, իր վարդապետարանով, 1281 թ. աշնան սկզբին դեռևս Առաքելոց վանքում էր, որից հետո «ամ մի բովանդակ» Քաջբրունյաց գավառում, որտեղից անցնում է «յերկիրն Սիւնեաց ի սուրբ ուխտն Գլաձորոյ»<sup>12</sup>: ներսեսի սաներից Կիրիկիայից եկած Մաթևոսը,

11. Ա. և Ղ ա տ յ ա ն, Ա. Մ ա թ և ո ս յ ա ն, Գլաձորի համալսարանը, Երևան, 1984, «Բազմավեպ», վեներիկ, 1947, № 9—10, «Արձագանք», Թիֆլիս, 1888:

6 Մ. Մաշտոցի անվան մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան), ձեռ. № 3932, էջ 329ր:

7 Նույն տեղում, ձեռ. № 5595, էջ 107բ, 400ա:

8 Նույն տեղում, էջ 228բ:

9 Նույն տեղում, ձեռ. № 1097, էջ 149ա, 6բ:

10 Գ. Հովսեփյանը ներսես վարդապետի պատվերով նույն՝ 1280 թ. է գրված համարում մի ժողովածու և նկատի ունենալով ձեռագրի ժամանակի՝ «Յձմի Զ և Ի երորդի Թ երորդի Թուականիս հայոց (1280)» ու ստացող ներսես վարդապետի անվան հիշատակությունը, գրում է: «Ձեռագրի բովանդակությունն է Ոսկեբերանի, Եփրեմի, Կյուրեղ Ալեքսանդրացու և մեր Ստեփանոսի և Վարդանի Եզնիկի մեկնությունները, որոնցից ոչ մեկը տպագրությամբ ծանոթ չէ բանասիրությանը... Ուրեմն այս ձեռագիրը Գլաձորի փառքն ու պատվը բարձրացնող մի unicum է համաշխարհային նշանակությամբ» («Հարավային կամ Պոռչյանք», էջ 258): Այդ ձեռագիրն այժմ պահվում է Մ. Մաշտոցի անվան մատենադարանում և կրում է 5906 համարը: Վերը նշված հիշատակարանը հետևյալն է. «Յձմի Զ երորդի և Խ երորդի Թ երորդի Թուականի Հայոց» (էջ 203ա), այսինքն՝ գրված է 1300 թվականին: Պարզապես, Գ. Հովսեփյանը Խ (40) տառը Ի (20) է կարդացել ձեռագրի խունացման պատճառով: ներսես Մշեցին մահացել է 1284 թ., ուրեմն 1300 թ. նա ձեռագիր ստանալ չէր կարող: նշված ներսես վարդապետը՝ ներսես բարունին չէ, և ոչ էլ ձեռագիրն է գրված Գլաձորում:

11 «Յձուցակ Երուսաղեմի», հ. Զ, էջ 89—93:

12 Մատենադարան, ձեռ. № 4517, էջ 271ա:



1283 թ. արտագրած ձեռագրի հիշատակարանում, հայտնում է բաբունապետի և նրա աշակերտների հաստատված տեղը՝ Վայոց ձոր գավառի Աղբերց վանքը, որն հետագայում կոչվում է Գլաձոր<sup>13</sup>:

Գլաձորի համալսարանի գրչութեան դպրոցի հիմնադիրը Ծսայի Նչեցին է: Նա ծնվել է Սասնո գավառի Նիչ գյուղում (որտեղից էլ Նչեցի մականունը), 1260-ական թվականներին: Սովորել է Մշո Առաքելոց վանքում, ներսես բաբունու մոտ և իր ընդունակությունների շնորհիվ արժանացել բաբունապետի ուշադրությանը: Ծսային դիտվել է որպես բաբունապետի ապագա փոխարինող և կոչվել «հետևող», նրան է հանձնարարվել գրչութեան գործի հսկողությունը: Գլաձորի վանքում Նչեցին սրբագրել է Ստեփանոսի, Մաթևոս Կիլիկեցու, Սարգսի 1282—1284 թթ. կատարած ընդօրինակությունները և միաժամանակ ինքն ընդօրինակել ձեռագրեր: Այս շրջանի նրա ուշագրավ աշխատանքը համալսարանում կարդացվող մատենագրական երկերի պատճառների և լուծմունքների ժողովածուն է<sup>14</sup>, որը և Նչեցու վարդապետական աստիճան ստանալու համար ներկայացված աշխատանքն է (պայմանականորեն կոչվում է «Ռսկիորիկ պատճառք և լուծմանց»): Այստեղ առաջին անգամ Նչեցին հիշվում է իբրև վարդապետ: Ներսեսի մահից հետո միակ մատչյանը, որ ընդօրինակել է Ծսային, դա 1284 թ. Գրիգոր արքեպիսկոպոսի համար գրված ձեռագիրն է<sup>15</sup>,

նրան Մշեցու մահից հետո, երբ Ծսային ստանձնում է համալսարանի բաբունապետությունը, գրչութեան հսկողությունը հանձնում է ուրիշներին: Այս շրջանից նրանից մեղ հասած ձեռագրերը սեփական ստեղծագործություններն են: Դրանցից առաջինը Դիոնիսիոս Արխապագապետ երկերի մեկնությունն է, որ նա կատարել է ձեռագրի լուսանցքներում և այդ մասին թողել հիշատակարան. «Ջնուսստ և մեղապարտ ոգի Ծսայի մի մոռանաք յիշել ի բարի, որ ուղղեցի ի սա դատոր, զկէտ, և զբան և զտուն: Եւ ի տեղիս դժուարալոյծ բանիցն գրեցի լուծմունս իմով ձեռամբ, որպէս տեսանէք»<sup>16</sup>,

1303 թ. Ծսայի Նչեցին, Ստեփանոս Օրբելյանի խնդրանքով, ավարտում է Եղեկելի մարգարեության մեկնությունը: Աշխատությունն ունի նախաբան, որ բացատրված են գրոթեան հանգամանքները և շարժառիթները<sup>17</sup>: Նչեցու մյուս ինքնուրույն գործը «Վերլուծութիւն քերականութեան» աշխատությունն է, որից երկու օրինակ մեզ է հասել ինքնագրով. առաջինը պահվում է Վենետիկում, որը գրված և սրբագրված է Ծսայի Նչեցու ձեռքով<sup>18</sup>, իսկ մյուսը՝ խումբագրված է դարձյալ նրա կողմից և պահվում է Երուսաղեմում<sup>19</sup>: Մշո Առաքելոց վանքի մատենադարանում է պահվել «Վերլուծութիւն քերականութեան Ծսայիա Նչեցւոյ» խորագրով մի ձեռագիր՝ Ծսայի բաբունապետի նկարով (աթոռի վրա նստած, վեղարը գլխին, մի ձեռքին գավազան, մյուսը՝ պարղած)<sup>20</sup>: Դժբախտաբար, ձեռագրի ճակատագիրն անհայտ է: Բացի հիշատակված ծավալուն երկերից, Նչեցին հեղինակ է բազմաթիվ մեծ ու փոքր թղթերի ու շրջաբերականների՝ ուղղված այս կամ այն դպրոցի, կամ թեմի առաջնորդին:

1318 թ. Ծսայի Նչեցին իր համար ընդօրինակել է տալիս մի Աստվածաշունչ<sup>21</sup>, 1319 թ.՝ մի Ավետարան<sup>22</sup>, իսկ 1323 թ.՝ մի այլ Ավետարան<sup>23</sup>, որը

13 «Յուցակ Վիեննայի», էջ 1038:

14 Մատենադարան, ձեռ. № 437:

15 Նույն տեղում, ձեռ. № 1422:

16 Նույն տեղում, ձեռ. № 167, էջ 37ա:

17 Նույն տեղում, ձեռ. № 1276, էջ 175ա:

18 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 131—132:

19 «Յուցակ Երուսաղեմի», Կ. Ե, էջ 185:

20 «Յուցակ Մշո Առաքելոց վանքի», էջ 17:

21 Մատենադարան, ձեռ. № 206:

22 «Բաղմավեպ», 1947, № 9—10, էջ 118—119:

23 Մատենադարան, ձեռ. № 6289:

նվիրված է իր ուսուցչին. «յիշատակ բարեաց վարդապետին իմոյ ներսեսի մեծ քաջ հռետորի և աստուածախաւս վարդապետի...»<sup>24</sup>:

Ներսես Մշեցու օրինակով նշեցին ևս ընդօրինակություններ էր հանձնարարում ոչ միայն տեղում՝ Գլածորում, այլև՝ զանազան վայրերում: Այսպես՝ Արարատյան վանքերը շրջագայելիս նա իր հետ բերում է նախօրոք հանձնարարված կամբրոնացու Սաղմոսաց մեկնությունը, որը Հովհաննես Երզնկացին և Վարդան Կիլիկեցին թերի էին թողել, և տալիս Մկրտիչ Թեղենացուն՝ լրացնելու: 1302 թ. սեղև աւարտ գրչութիւն սորա յԱրարատայան նահանկիս, յաստուածաբնակ և ի գերահռչակ սուրբ ուխտս Թեղենաց... ձեռամբ թարմատար և անարհեստ գրչի Մկրտիչ կոչեցեալ, անուամբ միայն բարբի. ի սոյն անապատէ»<sup>25</sup>: Հաջորդ տարում «ի թուիս հայոց ՉԾԲ (1303 թ.) ի գաւառիս Այլարատեան ի վանս որ կոչի նունոնից» Թաղեոս գրիչը, Հովհաննես Արճիշեցու խնդրանքով, ընդօրինակում է մի Մեկնություն<sup>26</sup>:

Գրել տալուց գատ, նշեցին նաև ձեռագրեր էր հավաքում: Ստեփանոս գրիչը նրան համարում է «բազում գրեանց ժողովող»<sup>27</sup>:

Այժմ ներկայացնենք Գլածորի գրիչներին:

Ստեփանոսը Գլածորի համալսարանի գրչութեան ղարոցից մեզ հասած առաջին ձեռագրի գրիչն է<sup>28</sup>, 1283 թ. նա օգնել է Ծսայի նշեցուն<sup>29</sup>, իսկ հաջորդ թվականին Ծսային հիշում է իրեն օգնող «գսիբելի եղբայրս Ստեփանոս...»-ին<sup>30</sup>, 1318 թ. Ստեփանոսը նշեցու համար Աստվածաշունչ է արտագրել<sup>31</sup>:

Մաթևոսը 1283 թ. գալիս է Աղբերց վանք և նվիրվում գրչութեան արվեստին.

...ի նահանգէ Կիլիկեցի...  
Յանապատէ հռչակելի,  
Որ յորջորջի անուն Մլիճի...  
Որոյ եկեալ յայս գաւառի,  
Որում անուն Վայձոր կոչի,  
Հուպ ի շիրիմքն Սիւնեցի,  
Ի յԱղբերց վանս մենաստանի.  
Յերկրորդ Աթէնս պանծալի:  
Առ ոտս հաւր մեր ներսէսի  
Եւ բաբունեաց վարդապետի<sup>32</sup>:

Այս ձեռագիրն Մաթևոսն ավարտել է 1284 թ.: 1629 թ. ընդօրինակված մի նարեկի մեջ պահպանվել է սրա գաղափար օրինակի 1291 թ. հիշատակարանը<sup>33</sup>, ինքնագրում ենք, որ հիշյալ ձեռագիրն արտագրված է Մաթևոս Կիլիկեցու՝ 1291 թ. Գլածորում Տիրատուր Կիլիկեցու համար ընդօրինակած նարեկից: Մաթևոսն այդ ժամանակ արդեն վարդապետ էր և աշխատում էր ս. Մարի կամ Կողբա վանքում<sup>34</sup>:

24 Նույն տեղում, էջ 283բ:

25 Նույն տեղում, ձեռ. № 6558, էջ 637բ—638ա:

26 Նույն տեղում, ձեռ. № 3606, էջ 275բ:

27 Նույն տեղում, ձեռ. № 206, էջ 212ա:

28 Նույն տեղում, ձեռ. № 49:

29 Նույն տեղում, ձեռ. № 437, էջ 407ա:

30 Նույն տեղում, ձեռ. № 1422, էջ 191բ:

31 Նույն տեղում, ձեռ. № 206:

32 «Յուցակ Վիեննայի», էջ 1036:

33 «Յուցակ Անկյուրիո», էջ 659—666:

34 «Յուցակ նոր Զուղայի», էջ 226:

Սարգիսը համալսարանի նոր ընդունված սաներից էր: 1283—1284 թթ. նա ավարտում է Եվագրի խրատները<sup>35</sup> և օգնում է Նշեցուն ավարտելու Ոսկեփորիկը<sup>36</sup>:

Սիմեոն գրիչը օգնել է Ծսայուն Ոսկեփորիկը գրելիս<sup>37</sup>: Նրա գիրն ավելի շղագրին է մոտենում, որն ինքը համարում է ասնյարմար գիր:»

Մոմիկը Գլաձորի առաջին սաներից էր, որին հանդիպում ենք 1283 թ. ձեռագիր գլխազարդելիս: Մի զարդի մեջ նա մակագրել է. «ՉՄոմիկ նկարիչ խոսանիս յիշեցէք աղաչեմ»<sup>38</sup>:

Հովասափը 1292 թ. Գլաձորում արտագրում է մի Մեկնություն<sup>39</sup>: Չեռագիրը արևելյան բոլորգրով է:

Հովհաննեսը 1291 թ. ուսուցման նպատակով գրված մի ձեռագիր<sup>40</sup> է ավարտում, ուր առաջին անգամ հիշվում է Գլաձոր անունը. «Գրեցաւ ի մենաստանս որ կոչի Գլաձոր, ընդ հովանեաւ սրբոյն Ստեփանոսի»<sup>41</sup>: Հաջորդ ձեռագիրը 1293 թ. է, երբ «ի վանս Գլաձոր, ընդ հովանեաւ սուրբ նախավկայիս» նա ավարտում է Պիտոյից գիրքը<sup>42</sup>: Այստեղից երևում է, որ նախորդ հիշատակարանում նշված ս. Ստեփանոսը՝ Ստեփանոս նախավկան է, որի անունով կոչվել է Աղբերց կամ Գլաձորի վանքը:

Վարդան Կիլիկեցին 1291 թ. գալիս է Գլաձոր՝ գրչության մեջ կատարելագործվելու և վարդապետական աստիճան ստանալու: Այդ թվականին «Տրամանաւ Ծսայեայ» արտագրում է մի ժողովածու<sup>43</sup>, իսկ 1290 թ.՝ Ծսայի վարդապետի շնորհած օրինակից, մի այլ ժողովածու<sup>44</sup>: Դրանից առաջ նա Հովհ. Նրզնկացու հետ արտագրել էր Ներսես Լամբրոնացու մեկնությունը, ինչպես նաև Նյուսացու Ինն երանության մեկնությունը<sup>45</sup>, 1299 թ. Կիլիկեցին արդեն վարդապետական աստիճան էր ստացել և վերադարձել հայրենիք: Նույն թվականին Կիլիկիայի Ակներ վանքի մոտ յլաստուածաբնակ մենաստանին ի Չորովանս» ավարտում է մի Ավետարան<sup>46</sup>, Գրիգոր Անավարդեցի կաթողիկոսը նսայի Նշեցուն նվիրելու համար Վարդանին պատվիրում է արտագրել Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը»: 1305 թ. ձեռագիրը ստանում է Ծսայի Նշեցին և մակագրում. «Ծսայի վարդապետի է գիրքս, յաղագս որոյ միշտ յիշել աղաչեմ յողորմութիւն Աստուծոյ»<sup>47</sup>:

Մկրտիչ Թեղեկացին սովորել է Գրիգոր Դարունապետի Բշնիի դպրոցում: 1298 թ., նրա մահից հետո, գնում է Գլաձոր և Ծսայի Նշեցու հանձնարարությամբ ընդօրինակում «Մեկնութիւն կաթողիկէից թղթոց»-ը՝ Մաթևոս Կիլիկեցու 1283—1824 թթ. օրինակից: Արտագրում է նաև Մաթևոսի հիշատակարանը՝ փոխելով դեմքերի և դեպքերի անուններն ու թվականը:

...ի նահանկէ Այրարատի,  
 Լուսաւորչին մերոյ տեղի,  
 Յանապատէ հռչակելի,

35 «Յուցակ Վիեննայի», էջ 1038:

36 Մատենադարան, ձեռ. № 437, էջ 227: Ծսային դպրուցանում է Սարգիս գրչին, որ մանր գրի: Սարգիսը կատարում է նրա պատվերը և լուսանցքում գրում՝ «Մանր կու ուզես՝ կարդա» (էջ 348ա):

37 Նույն տեղում, էջ 116:

38 «Յուցակ Վիեննայի», էջ 1038:

39 Մատենադարան, ձեռ. № 1363, էջ 217ա:

40 Ղ. Ա ի շ ա ն, նշվ. աշխ., էջ 131:

41 Նույն տեղում:

42 Նույն տեղում, էջ 138:

43 Նույն տեղում, ձեռ. № 470:

44 «Յուցակ Երուսաղեմի», Կ. Ձ, էջ 17—18:

45 Մատենադարան, ձեռ. № 749:

46 Նույն տեղում, ձեռ. № 4515, էջ 57:

47 Նույն տեղում, ձեռ. № 500, էջ 446ա:



Որ յորջորջի նա Քեղենի...  
Մերձ ի դղեակն Բջնի,  
Առ ի սահմանաւք Կոտայի,  
Որոյ անուն Վայձոր կոչի՝  
Հուպ ի շիրմըն Սինեցի, և այլն<sup>48</sup>:

Ձեռագրի մյուս հիշատակարանում նա արդեն գրում է «...ի մենաստանիս Գլածորիս...»:

Հովհաննես Երզնկացի (Մործորեցի) 1299 թ. առաջ Գլածորում սկսում է ներսես կամբրոնացու Սաղմոսաց մեկնության արտագրությունը, որը շարունակում է Վարդան Կիլիկեցին, ապա 1302 թ. ավարտում է Մկրտիչ Քեղենացին<sup>49</sup>: 1306 թ. Հովհ. Երզնկացին ընդօրինակում է մի այլ ձեռագիր: Սրա գրչության տեղը չի հիշվում, բայց հասկանալի է, որ Գլածորն է:

Ձիւ յորդորեաց յայս գործ իրի՝  
Ձի շարել ի քարտիսի.  
Ձի յայս տեղիքս յորում էի  
էր դպրութիւն հրաշալի<sup>50</sup>:

«Հրաշալի դպրության» վայրը այդ ժամանակ, Գլածորն էր, ուր սովորում էր Երզնկացին:

Տիրատուր Կիլիկեցուն առաջին անգամ հանդիպում ենք 1291 թ., երբ Մաթևոս Կիլիկեցին նրա համար ընդօրինակում էր Նարեկ: 1309 թ. «...ի մեծ դպրատանս որ կոչի Գլածոր.. ձեռամբ անիմաստ գրչի Տիրատուր Կիլիկեցույ» ավարտում է մի Ավետարան<sup>51</sup>, որի նկարիչը նույնպես Տիրատուրն է: 1321 թ. մի ձեռագրից իմացվում է, որ նա Գլածորի ընդունիչներից էր: Հետագայում կարգվում է Գլածորի երկրորդ ընդունապետ և այդպես էլ հիշվում նշեցու հետ<sup>52</sup>: Եսայի նշեցու մահից հետո նա համալսարանը տեղափոխում է Հերմոնի վանք:

Ոսկան վարդապետը 1304 թ. Գլածորում ընդօրինակում է մի Ավետարան<sup>53</sup>:

Պողոս վարդապետ Կիլիկեցին Ակների վանքից է, երազել է գալ Հայաստան՝ «յաղագս փափագման իմաստասիրական արհեստից»։ 1307 թ. «ի յաշխարհս Սինեաց ի վանս (Գլածոր), ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսիս, որոյ յերկրորդ Աթենս և մայր ամենայն իմաստից», ընդօրինակում է մի Ավետարան<sup>54</sup>: Վանքի անունը ջնջված է, բայց Սյունիքում ս. Ստեփանոսի անվամբ ուրիշ վանք չկա, որ կոչվի «յերկրորդ Աթենս և մայր ամենայն իմաստից»: Նույն թվականին, Մոմիկի վկայությամբ, Պողոս վարդապետը ընդօրինակում է մի Ավետարան ևս<sup>55</sup>: Մոմիկը կուրանում է և չի կարողանում ավարտել Ավետարանը, իսկ Պողոսը իր ձեռագիրն ավարտում է, սակայն հայտնի չէ Գլածորում, թե՛ նորավանքում, որովհետև 1310 թ. նրան տեսնում ենք Արատեսի

48 Նույն տեղում, ձեռ. № 1409, էջ 330ա:

49 Նույն տեղում, ձեռ. № 6558, էջ 637բ:

50 Նույն տեղում, ձեռ. № 2520, էջ 143բ, 344ա:

51 Նույն տեղում, ձեռ. № 3393, էջ 258ա:

52 «ԺԴ դարի հիշատակարաններ», էջ 294:

53 Նույն տեղում, էջ 31: Հիշատակարանը ժողովածուի 261 էջում է՝ այսպիսի ծանոթագրությամբ. «Թվ. 227 (1334)», որն անտարակույս սխալ է: Հեթոմ Բ թագավորը սպանվել է 1307 թ., Գրիգոր Անվարդեցին դաճակալել է 1293—1307 թթ., ուստի սույն հիշատակարանը գրված կարող էր լինել մինչև 1307 թ., ամենայն հավանականությամբ 207 (1304) թ. (տե՛ս նաև Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 134):

54 «Բարձրավեպ», 1947, № 9—10, էջ 218—219:

55 Նույն տեղում:

վանքում Ավետարան<sup>56</sup>, 1311 թ. Հերմոնի վանքում՝ մի ժողովածու ընդօրինակելիս<sup>57</sup>, 1313<sup>58</sup> և 1314 թթ.<sup>59</sup> Պողոսը Գլաձորում ավարտում է երկու Ավետարան, 1321 թ. Վայոց ձորում (վանքի անունը ըստ թերթի ընկնելու պատճառով) նա ընդօրինակում է ևս մի Ավետարան<sup>60</sup>:

Առաջել Ղազարացեցին 1313 թ., ուսանողական տարիներին, իր դասընկեր Ավետիսի համար ընդօրինակում է Սասյի Նշեցու Եզեկիելի մեկնությունը<sup>61</sup>, իսկ հրք Քիֆիլիսի դպրոցի բարունապետ էր, նա գալիս է Գլաձոր և Դավիթ Գետկեցուն պատվիրում է մի Աստվածաշունչ: Ձեռագիրը նկարագարում է Պորոս Տարոնացին և թողնում այսպիսի հիշատակագրություն.

Առաջել Ղազարացեցի  
Եւ բարունի ես Քիֆիլիսի.  
Աղօթք արա դու թորոսի  
Որ զգիրքս ծաղկեցի<sup>62</sup>:

Կիրակոս Երզնկացի 1317 թ. Հովհաննեսի, Կարապետի և Տիրացուի հետ ավարտում է մի Աստվածաշունչ, որի ստացողն ինքն էր<sup>63</sup>, 1324 թ. արդեն Երզնկայում դասասաց վարդապետ էր:

Կարապետը 1317 թ. օգնում է Կիրակոս վարդապետին Աստվածաշունչ արտագրելիս: Նա, հավանաբար նաև Մատենադարանի № 6897 ձեռագրի գրիչն է<sup>64</sup>, Սարգիսը 1317 թ. ընդօրինակում է մի Ոսկեփորիկ, որը նաև լրացնում է նոր նյութերով<sup>65</sup>: Նա է, հավանաբար, Մատենադարանի № 4456 ձեռագրի ծաղկող Ամիր Սարգիսը<sup>66</sup>:

Միտքաւ Երզնկացի Երզնկայի իր ուսուցիչ Գրիգորիս Յաղմանեցու խորհրդով 1314 թ. ընդօրինակում է իմաստասիրական ժողովածու, որը նկարագարում է Տարոնացին.

...Յիմաստից տուն Գլաձորիս  
Ի Վայիձոր վիճակիս<sup>67</sup>...:

Հակոբ Թագուրացի 1318 թ. Գլաձորում արտագրում է մի ձեռագիր<sup>68</sup> և մի Կանոնգիրք<sup>69</sup>:

Եփրեմը 1318 թ. Սարտիրոս վարդապետի համար ավարտում է «Ժողովածու մեկնութեանը»<sup>70</sup>:

Թորոսը Գլաձորում 1321 թ. Սարգիս վարդապետի համար ընդօրինակում է Ֆրա Թովմայի գործը<sup>71</sup>:

56 Մատենադարան, ձեռ. № 4476, էջ 137բ:

57 «Ցուցակ Մշո Առաքելոց վանքի», էջ 17:

58 Մատենադարան, ձեռ. № 7842, էջ 335բ:

59 Նույն տեղում, ձեռ. № 9150:

60 «Ժ Գարի հիշատակարաններ», էջ 170:

61 «Արձագանք», 1888, № 10, էջ 130:

62 Մատենադարան, ձեռ. № 4515:

63 Նույն տեղում, ձեռ. № 353:

64 «Ժ Գարի հիշատակարաններ», էջ 128—129:

65 Նույն տեղում, էջ 136, Լ. Խաչիկյանը ծանոթագրում է. «Սույն գրիչը Սարգիս կամ Ամիր Սարգիս, 1317/1318 թթ. ընդօրինակել է Վենետիկի Մատենադարանի № 265 ձեռագիր-«Ոսկեփորիկը», ուստի հիշատակարանը տեղագրում ենք 1318-ի թվաշարում»:

68 Նույն տեղում:

67 Նույն տեղում, էջ 103—104:

68 Մատենադարան, ձեռ. № 418, էջ 188բ:

69 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 348—349:

70 Մատենադարան, ձեռ. № 1419:

71 Նույն տեղում, ձեռ. № 1560:

Կյուրեօնը սովորել է Մեծոփա վանքում Հովհաննես Արճիշեցու մոտ, ապա տեղափոխվել Գլաձոր: Նրա ընդօրինակությամբ հայտնի է մի ձեռագիր՝ գրված 1321 թ. Մարտիրոսի համար<sup>72</sup>: Կյուրեօնին հետագայում տեսնում ենք Վերին Նորավանքի դպրոցի բարձրագույնի պաշտոնում<sup>73</sup>:

Ներսես Սասնեցին 1319 թ. ընդօրինակում է Ծսայի Նշեցու կատարած Կիոնիսիոսի մեկնությունը<sup>74</sup>: Հարագատներից հավաքած միջոցներով 1332 թ. նա Գլաձորում Աստվածաշունչ է արտագրել տալիս Ծփրեմ և Դավիթ գրիչներին<sup>75</sup>: Ներսեսը հարում էր միարարներին:

Դավիթ Գեոկեցին 1321 թ. Առաքել Հաղբատեցու համար ընդօրինակում է մի Աստվածաշունչ<sup>76</sup>, իսկ 1332 թ., Ծփրեմ գրիչի հետ, Ներսես Սասնեցու համար՝ դարձյալ մի Աստվածաշունչ<sup>77</sup>: Նա մի ձեռագրի հիշատակարանում ներքող է ձոնել Ծսայի Նշեցուն, որից մի հատված տպագրված է<sup>78</sup>:

Հունանը 1334 թ. ընդօրինակում է մի իմաստասիրական ժողովածու<sup>79</sup>:

Կրիգորը 1335 թ. ընդօրինակում է մեկնությունների ժողովածու<sup>80</sup>: Նա է, հավանաբար, համալսարանը Հեռմոնի վանք տեղափոխվելուց հետո մեզ հասած առաջին ձեռագրի գրիչը<sup>81</sup>:

Կան Գլաձորում գրված մի շարք ձեռագրեր, որոնց թվականը հայտնի է, բայց գրիչը՝ ոչ: Գրանցից են Գրիգոր Աստվածաբանի ճառերը (1321 թ.)<sup>82</sup> և իմաստասիրական մի ժողովածու (1425 թ.)<sup>83</sup>: Մեզ են հասել նաև ձեռագրեր, որոնք ընդօրինակված են Գլաձորում, բայց դրանց գրություն ժամանակը հայտնի չէ: Այդպիսիք են Եղեկեղի արտագրած Աստվածաշունչը և Մաթևոս Սեբաստացու ընդօրինակած մեկնությունը<sup>84</sup>, որոնք Լ. Խաչիկյանը արտագրված է համարում մինչև Նշեցու մահը, իսկ Գիրք Պիտոյիցը՝ «Կիր [ակոսի]» կողմից՝ Նշեցու մահից հետո, որը հասկացվում է հետևյալ սողից. «զգեբարուն բանի սպասաւոր և զբարեաց արժանաւոր յիշատակի՝ զբարունապետն մեր Ծսայի աղաչեմ յիշել»<sup>85</sup>: Մեր կարծիքով հիշատակարանի «Կիր» բառը ոչ թե «Կիր [ակոս]», այլ «Կիր [իոն]» պետք է կարդալ, որն այդ ժամանակ աշխատում էր Նորավանքում ու կապված էր Գլաձորի և Ծսայի Նշեցու հետ:

Թորոս Տարոնացին Գլաձորի համալսարանի մանրանկարչական արվեստի ամենախոշոր ներկայացուցիչն է: Մնվել է Տարոն գավառի Մուշ քաղաքում, Մարդիս քահանայի ընտանիքում, սովորել է նախ ծննդավայրում, ապա տեղափոխվել Գլաձոր՝ Ծսայի Նշեցու մոտ: Ավարտելով համալսարանը, աշխատել է Գլաձորում որպես գրչության արվեստի դասատու: 1329 թ. Պարոնշահի համար ընդօրինակել է մի Ավետարան<sup>86</sup>: Ձեռագրի հիշատակարանը Ծ. Լալայանի Ցուցակից քաղել է Լ. Խաչիկյանը և ընդօրինակության տեղը նշանակել հարցականով «Տարոն»-ն: Հավանականը սակայն Գլաձորն է, որովհետև, հիշելով Ծսայի Նշեցուն, Տարոնացին գրում է, «ընդ որոյ թեք բազումք տարաբանան: Ընդ որում և ես անարժան թորոս, ընդ հովանեաւ նորա բազում ժամանակս խնամօք

72 «Ժ դարի հիշատակարաններ», էջ 166:

73 Նույն տեղում, էջ 157:

74 «Ցուցակ Մշո Առաքելոյ վանքի», էջ 22:

75 «Ժ դարի հիշատակարաններ», էջ 245:

76 Գ. Հովսեփյան, նշվ. աշխ., էջ 350—351:

77 «Ժ դարի հիշատակարաններ», էջ 245—247:

78 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 135:

79 Մատենադարան, ձեռ. № 9222, էջ 1ա:

80 Նույն տեղում, ձեռ. № 1141, էջ 331ա:

81 «Ցուցակ Նրուսաղեմի», հ. Դ, էջ 592:

82 Նույն տեղում, հ. Ծ, էջ 71:

83 «Ժ դարի հիշատակարաններ», էջ 198:

84 Նույն տեղում, էջ 303:

85 Նույն տեղում, էջ 302:

86 «Ցուցակ վասպուրականի», էջ 179—182:



աշխատեցաւ ի գիր և ի ծաղիկ, և զօրինակ սուրբ Աւետարանիս Նովաւ ըղորդեցիս»<sup>87</sup>, Ինչպէս նկատում ենք, ձեռագիրն արտագրվել է Նշեցու օրինակից և նրանով սրբագրվել, որը, ընականաբար, Գլաձորում և ոչ Տարոնում կարող էր կատարվել: Այս Թորոսն է նաև Մատենադարանի № 560 ձեռագրի մի մասի գրիչը՝ գրված թի վանս Գլաձոր, մօտ ի մեծ վարժապետի Եսայի»<sup>88</sup>: Սակայն Թորոսն ավելի շուտ ծաղկող էր, քան գրիչ՝ «լցեալ ամենայն իմաստութեամբ ևս առաւել գրականութեամբ և ծաղկողութեամբ»<sup>89</sup>, 1317 թ. նա ծաղկում է Կիրակոսի արտագրած Աստվածաշունչը<sup>90</sup> և Սարգսի ընթօրինակած Ոսկեփորիկը<sup>91</sup>, 1318 թ.՝ Եսայի Նշեցու Աստվածաշունչը<sup>92</sup>, իսկ 1319 թ.՝ Ավետարանը<sup>93</sup>, 1321 թ. Տարոնացիի նկարադարդում է Կյուրիոնի արտագրած Ավետարանը<sup>94</sup>, իսկ 1323 թ.-ին դարձյալ Նշեցու համար՝ մի Ավետարան<sup>95</sup>: Ներսես Սամնեցու համար նա նկարադարդում է մի Աստվածաշունչը<sup>96</sup>: Գլաձորի համալսարանից հետո նրան տեսնում ենք Ապրակունյաց վանքում: 1307 թ., երբ Մովսիկը Ավետարան արտագրելիս կուրանում է, նկարադարդումը կատարում է Թորոս Տարոնացիին<sup>97</sup>:

Մենք տեղեկութուններ հաղորդեցինք այն գրիչների մասին, որոնք սովորել և ձեռագրեր են ընթօրինակել Գլաձորում: Սակայն կան ձեռագրեր, որոնք, գրված լինելով տարբեր վայրերում, Գլաձորի համալսարանի համար ծառայել են որպէս դասագրքեր: Բացի դրանցից, արժ մ էլ կան ձեռագրեր, որոնց տեղն ու գրիչը հայտնի չեն, բայց հնարավոր է ճշգրտել ձեռագրագիտական-հնարական մանրախույզ աշխատանքով:

## ПЕРЕПИСЧИКИ И РУКОПИСИ ГЛАДЗОРСКОГО УНИВЕРСИТЕТА

АРПЕНИК КАЗАРСЯН

### Резюме

За 60 лет существования Гладзорский университет дал 360 выпускников, каждый из которых на протяжении учебы в университете занимался перепиской рукописей. Однако среди них были и такие, которые специализировались только в искусстве письма и занимались этим в течение всей жизни в различных монастырях и скрипториях. Из гладзорских рукописей до нас дошло очень малое число и, кроме того, не все из них имеют иштатакараны (колофоны), неизвестным остаются время и место их переписки.

Изучение рукописей, хранящихся в Матенадаране им. Маштоца, иштатакаранов армянских рукописей, изданных армянских рукописей, каталогов рукописей, сводной картотеки армянских рукописей, исследований, посвященных Гладзорскому университету, дало возможность систематизировать дошедшее до нас рукописное наследие Гладзора по переписчикам, уточнить некоторые вопросы, касающиеся датировки и места переписки рукописей, не освещавшиеся до сих пор или освещавшиеся неполно.

87 «ԺՂ դարի հիշատակարաններ», էջ 215:

88 Մատենադարան, ձեռ. № 560, էջ 105ա:

89 «ԺՂ դարի հիշատակարաններ», էջ 104:

90 Մատենադարան, ձեռ. № 353:

91 «ԺՂ դարի հիշատակարաններ», էջ 135:

92 Մատենադարան, ձեռ. № 206:

93 «Բազմավեպ», № 9—10, էջ 219:

94 «ԺՂ դարի հիշատակարաններ», էջ 166:

95 Մատենադարան, ձեռ. № 6289:

96 «ԺՂ դարի հիշատակարաններ», էջ 247:

97 «Բազմավեպ», № 9—10, էջ 216—217: